

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՍՏ ԱՐՄԱՍԸ

Գ. Բ. ՋԱՅՈՒԿՅԱՆ

Իր «Հայերեն արմատական բառարանում» Զր. Աճառյանը, ոչ առանց Նոր հայկազյան բառարանի ազդեցության, աստ «ուժ, զորություն, ամրություն, հաստատունություն» արմատը միացնում է ազդ արմատի հետ: Քննելով ազդ բառի և սրանից ածանցված ազդել բայի իմաստային զարգացումը՝ Աճառյանը ազդիլ «զգալ» կրավորական իմաստից բխեցնում է «ներգործել, ազդել» իմաստը և շարունակում. «Սրանից անբաժան է «զորություն, ուժ» իմաստը, որից ազդոյ (հետևաբար ազդու) «զօրաւոր»... Վերջին իմաստով բառս գրվում է նաև աստ (ինչպես կա ազդր և աստր), առանձին անգործածական է, գտնվում է հետևյալ ձևերի մեջ. աստագոյն, աստիագոյն «սաստկագոյն», աստևոր, «հաստատուն», աստի, աստին, աստոյ «զօրեղ», բոլորն էլ հետին: Բայց հնից կան յաստոջ պահել, առաել աստից (ըստ Թոռնեան հատընտ. 1891, էջ 53 առաւելան դիք), յաստիս մանկութեան, յաստիս մարմնոյ, յետ աստեացն մանկութեան «արբունք, առույգ, հասակ», յաստիս ուժի զօրութեան:

Ճրանսիական հետազոտողներից Օդրին վերջերս ուշադրություն դարձրեց Աճառյանի կողմից միացված ազդ և աստ արմատների տարբերությանը: Դժվար չէ հասկանալ, որ այդ միացումը հիմնվում է ազդ բառի մասնակի գործածություններից մեկի վրա: Դեռ ավելին, Աճառյանը գրում է. «Իրանական բառը պետք է ունեցած լինի «ներգործություն, ուժ» նշանակությունը»: Իրականում իրանական բառերը այդպիսի իմաստ չունեն: Հին պարսկերենի *azdā* բառի իմաստն է «հայտնի, ակնհայտ». համապատասխան ավեստերեն բառը՝ *azdā-*ն, նշանակում է «հայտնի, հավաստի»: Սրանց հին հնդկական զուգահեռը՝ *addhā-*ն նշանակում է «իսկապես, հավաստիորեն», *azdā-*ից կազմված *azdākara* «ազդարար» ձևը առկա է սողդերեն **zkr*, միջին պարսկերեն *azdēgar* բառերում: Այսպիսով, հայերեն ազդ բառի սկզբնական իմաստը նույնն է իրանական բառերի հիմնական իմաստի հետ, բայց ստացել է նաև ազդել «ներգործել» իմաստը:

Ինչ վերաբերում է աստ-ին, ապա այն, ամենայն հավանականությամբ, հաստ բառի մի տարբերակն է: Հաստ բառը, իր իսկ Աճառյանի բացատրությամբ, ունի «ամուր, հաստատուն, ուժով, հաստատություն, ամրություն» իմաստները, իսկ «հաստ, թանձր» իմաստը հանդիպում է ավելի ուշ: Սկզբնական իմաստով հաստ-ից ածանցված են հաստել «ամրացնել, հաստատել, ստեղծել», հաստիչ «ստեղծող, հաստումն» հաստատ, հաստուած, հաստոյ բառածևերը:

Հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական հ-ով և առանց հ-ի ձևերի զուգահեռ գոյությունը բավական տարածված է: Դրանք մասամբ կապված են ծայնավորային տարբերությունների հետ (հմնտ. ոտն և հետ), մասամբ ազատ տարբերակներ են՝ հայց - այց, հոգի - ոգի, հեստել - եստել, հաատ - աատ, համբառնալ - ամբառնալ, համբարակ - ամբարակ, համբարակապետ - ամբարակապետ և այլն: Այսպիսով, լիովին հնարավոր է հաստ և աստ ձևերի զուգահեռությունը:

Հայերենի հաստ-ը ծագումնային զուգահեռներ ունի հին հնդկերեն *pastyam* «մըշտական բնակավայր», հին իսլանդերեն *fastr*, հին վերին գերմաներեն *festi* «հաստաբուն, ամուր» ձևերի մեջ: Հնարավոր է, որ այս ձևերը մասամբ խառնված լինեն հնդեվրոպական **ost-* «ոսկոր» արմատի բուն իմաստից ածանցված իմաստների հետ (հմնտ. խեթերեն *hastai-*, *hasti-* «ոսկոր. դիմացկունություն, դիմադրողականություն»):

Այսպիսով, եղած փաստերի հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունները. 1) հայերենի ազդ և աստ արմատները տարբեր են Աճառյանի բառարանում միացված ազդ-ի իմաստային զարգացման մեկ օղակի հիման վրա, 2) ազդ-ն ունի իրանական ծագում՝ միանգամայն հավաստի իրանական զուգահեռներով, 3) աստ արմատը զուգահեռ է հաստ արմատին, և սրանց սկզբնական իմաստներն իրար մոտ են, 4) հաստ և աստ արմատները ծագում են հնդեվրոպական միևնույն *past- «ամուր» արմատից, որը հենվում է հնդկական, հայկական և գերմանական ծագումնային զուգահեռների վրա:

Յետաքրքրական է հաստ արմատի ածանցյալների իմաստային զարգացումը՝ հաւտել «հաստատել, ամրացնել, ստեղծել», հաստիչ «ստեղծող», հաստատել «հաստատ դնել, հաստատել», հաստուած «հաստատված, ստեղծված»:

Եղած տվյալների հիման վրա մենք կարող ենք հավաստի համարել մեր դրույթը աստուած բառի հայերեն ծագման մասին: Այն ակնհայտորեն ծագում է աստ «ամրություն, ուժ, զորություն» արմատի *աստիւ տիպի մի ձևից՝ մասամբ ածանցի վերածված ած արմատով. վերջինս, ինչպես հայտնի է, ծագում է հնդեվրոպական *ag- արմատից և հին հայերենում ունեցել է «բերել» իմաստը: Վ. Պիզանին աստուած բառի իր վերականգնած սկրնածևի համար նկատի է ունեցել հենց այդ *ag-ը, սակայն կասկածելի է *jagi-diy-ag- ընդհանուր սկզբնածևի նրա վերականգնումը: Եթե նկատի ունենք, որ հնում -ած ածանցն ունեցել է նաև ներգործական արժեք (հմտ. գրած «գրացող», ողորմած «ողորմացող»), ապա աստուած-ը կարող էր ունենալ «հաստող, ստեղծող» իմաստը, որ միանգամայն օրինական է այդ բառի համար:

Г. Б. Джаукян — Армянский корень ast. — На основе семантического и этимологического анализа в современном армянском выделяется корень ast (сила, мощь), который раньше считался вариантом корня azd — «известие, влияние, воздействие».